ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՊԱՏՄԱԲԱՆԸ

(Ա. Ն. Մնացականյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Նավասարդի Մնացականյանի ծննդյան 70 և գիտահասարակական գործունեության 50-ամյակը։ Բեղուն և հարուստ է Ա. Մնացականյանի անցած կյանքի ուղին, ծանրակշիռ է նրա պատմագիտական վաստակը, բազմակողմանի նրա կուսակցական և գիտական գործունեությունը։ Նա այն սերնդի ներկայացուցիչներից է, որոնք իրենց գործունեությունը սկսեցին 1930-ական թվականների սկզբներին, անցան պատերազմի բովով և հետպատերազմյան տասնամյակների հայրենանվեր աշխատանքով բոլոր ջանքերով նվիրաբերվեցին մեր հանրապետության տնտեսական ու մշակութային կյանքի զարգացմանը։

Հիրավի, Ա. Մնացականյանն անցել է կյանքի բեղմնավոր ուղի։ Երիտասարդ տարիներին նա կատարել է կոմերիտական մի շարք պատասխանատու աշխատանքներ։ ՍՄԿԿ շարքերն է ընդունվել 1938 թ.։ Աշխատել է որպես շրջանային մի շարք թերթերի խմբագիր, խմբագրել է հանրապետական թերթեր և հանդեսներ։ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Ա. Մնացականյանը կուսակցական մոբիլիզացիայով ավագ քաղղեկի կոչումով մեկնել է ռազմաճակատ։ 1942 թ. հունվար—մարտին Կերչում աշխատել է որպես Ղրիմի ռազմաճակատի «Մարտական գրոհ», ապա «Մարտական ղրիմյան» թերթի խմբագիր, իսկ նույն տարվա ապրիլ—օգոստոսին սովորել և ավարտել է կարմիր բանակի քաղաքական աշխատողների բարձրագույն դասընթացը։ 1942 թ. սեպտեմբերից, Կովկասի պաշտպանության ծանր օրերին, ուղարկվել է Անդրկովկասյան ռազմաճակատ, որտեղ աշխատել է քաղվարչությունում որպես զինհրատի կազմակերպիչ, ղեկավարել մարտական գրականության թողարկումը, խմբագրել ռազմաճակատային «ԲԳԿԲ մարտիկ-Լենինյան դրոշով» հայերեն թերթը, միաժամանակ վարելով ռազմաճակատային բոլոր հրատարակությունների կուսբյուրոյի քարտուղարի պաշտոնը։ Պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով և մեդալներով։

1946 թ. բանակից զորացրվելով, Ա. Մնացականյանն աշխատել է նախ որպես ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի վարիչ, ապա խմբագրել է «Կուսակցական կյանք» («Լենինյան ուղիով»), «Ագիտատորի ու պրոպագանդիստի բլոկնոտ», («Կուսակցական խոսք») պարբերականները։ 16 տարիների ժուռնալիստական-խմբագրական գործունեության ընթացքում հանրապետական և կենտրոնական թերթերում նա տպագրել է ավելի քան 1500 խմբագրական, գիտաքաղաքա-

կան և պրոպագանդիստական հոդվածներ, ակնարկներ, գրականագիտական-քննադատական գրախոսություններ։ 1947—1953 թթ. Ա. Մնացականյանը վարել է կուսակցական մի շարք ղեկավար պաշտոններ՝ ՀԿԿ Երևանի Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղար, ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, ՀԿԿ Երևանի օկրուգային կոմիտեի առաջին քարտուղար։ Նա իբրև պատգամավոր մասնակցել է ՀԿԿ XIV—XVIII համագումարներին, ընտրվել ՀԿԿ Կենտկոմի անդամ, ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ։ Ղեկավար ինչ պաշտոն էլ որ վարել է կոմունիստ Ա. Մնացականյանը, նա միշտ աչքի է ընկել իր անբասիր աշխատանքով և կուսակցական սկզբունքայնությամբ։

Կուսակցական գործունեությանը զուգընթաց Ա. Մնացականյանը տակավին երիտասարդ հասակից դրսևորել է գիտահետազոտական աշխատանքի նկատմամբ բուռն հակումներ և մեծ ընդունակություններ։ 1945 թ. նա պաշտպանել է պատմական գիտությունների թեկնածուական, իսկ 1951 թ.՝ դոկտորական դիսերտացիաներ։ Սկսած 1953 թ., Ա. Մնացականյանն ամբողջովին նվիրվում է գիտական աշխատանքի։ 1953—1954 թթ. նա աշխատել է որպես ՀՍՍՀ ԳԱ նախագահության գիտական քարտուղար, իսկ 1954—1958 թթ.՝ գլխավորել ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր Մարքսի հայկական մասնաճյուղը։ Նրա հեղինակությամբ և ղեկավարությամբ առաջին անգամ կազմվել ու հրատարակվել են նախ «ՀԿԿ պատմության պրոսպեկտը», իսկ 1957 թ.՝ «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերը»։ Այս վերջինն առաջին լուրջ փորձն էր՝ լուսաբանելու Հայաստանում կոմունիստական շարժման կազմավորման և զարգացման ամբողջական պատմությունը, գնահատելու և բնութագրելու Հայաստանի կոմունիստական կուսակցության և աշխատավորների հեղափոխական շարժումների պատմության հարցերը։ ՀԿԿ պատմության հենց այս գիրքն էլ մի հայտնի չափով հիմք հանդիսացավ նրա հետագա հրատարակությունների համար։ Ի լրացումն այդ պրոբլեմի, Ա. Մնացականյանի նախաձեռնությամբ և մասնակցությամբ կազմվել ու հրատարակվել են «Հեղափոխական շարժումները Հայաստանում (1902—1907 թթ.)», «Հոկտեմբերյան հեղափոխությունը և սովետական կարգերի հաղթանակը Հայաստանում (1917—1922 թթ.)», «Հին բոլշևիկների հիշողությունները», «Հեղափոխական կոչեր և թռուցիկներ» վավերագրերի ժողովածուները, որոնց հիման վրա գրվել են գիտական շատ աշխատություններ։

1958 թ. Ա. Մնացականյանն աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում՝ նախ որպես ավագ գիտաշխատող, ապա բաժնի վարիչ, իսկ 1980 թ. սկսած նա ԳԱ սոցիալիստական ազգերի զարգացման ու մերձեցման պրոբլեմների հանրապետական գիտական խորհրդի նախագահն է։ Ա. Մնացականյանի արդյունաշատ գրչին են պատկանում ավելի քան 30 մենագրություն և մոտ 200 գիտական, գիտապրոպագանդիստական, հրապարակախոսական հոդվածներ, որոնցում լուսաբանվում են հայ ժողովրդի նոր և սովետական ժամանակաշրջանների պատմության հանգուցային շատ ու շատ հարցեր։ Չենք կարող չշեշտել մի կարևոր հանգամանք. Ա. Մնացականյան պատմաբանին բնորոշ են թեմատիկայի լայնությունը, նոր հարցադրումները, խոր ու համարձակ մեկնաբանությունները և ընդհանրացումներ կատարելու մեծ կարողությունը։

Ա. Մնացականյանն աչքի ընկնող մասնակցություն է ցուցաբերել հանրապետությունում պատմակուսակցական գիտության զարգացմանը։ Տարիների իր բեղմնավոր գիտահետազոտական աշխատանքով նա լուրջ ավանդ է ներդրել գիտության այդ բնագավառը։ Նրա աշխատություններում ուսումնասիրվել են Հայաստանի կոմկուսի պատմության, Անդրկովկասի հեղափոխական շարժումների, հայ ժողովրդի պատմական ճակատագրում Վ. Ի. Լենինի և կոմունիստական կուսակցության խաղացած մեծ դերի և բազմաթիվ հանգուցային այլ հարցեր։ Այդ աշխատություններն աչքի են ընկնում թեմատիկա-

յի թարմությամբ և չօգտագործված արժեքավոր նյութերի լայն ընդգրկմամբ։ Ա. Մնացականյանի շատ մենագրություններ և հոդվածներ ներդրում են մեզանում ռազմահեղափոխական և ռազմապատմական գրականության ստեղծման բնագավառում։ Նա առաջիններից մեկն էր, որ լուսաբանեց հայ ժողովրդի զավակների պայքարը ՍՄԿԿ-ի ստեղծման և ամրապնդման, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման և հաղթանակի համար, հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին։ Ա. Մնացականյանը միաժամանակ արժեքավոր ուսումնասիրություններ է գրել հայ ժողովրդի պատմության մի շարք կարևոր այլ խնդիրների վերաբերյալ։ Ընթերցողների մեջ լայն ընդունելություն գտան մանավանդ նրա «Գերմանա-Թուրքական գործակալության ձախողումը Կովկասում», «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ», «Հայ ժողովրդի մեծ եղեռնը և վերածնունդը»՝ տպագրված «Հուշամատյան մեծ եղեռնի» ժողովածուում (Բեյրութ), «Մեծ Հոկտեմբերը և Հայաստանը», «Հայ ժողովրդի ազատագրման լենինյան ուղին», «Կոմունիստական պարտիան հայ ժողովրդի ազատարարն է», «Հայ ժողովրդի ազատագրումն ու վերածնունդը» աշխատությունները։ Նրա գրչին են պատկանում ծանրակշիռ մի շարք աշխատություններ ևս՝ նվիրված հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության ու ազգային հարցի լուծման խնդիրներին։

Ընդհանրացնելով պիտի նշենք, որ հայ ժողովրդի և Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների և հեղափոխական շարժումների պատմությանը առնչվող գրեթե բոլոր հիմնական հարցերը այս կամ այն չափով գտնվել են Մնացականյան հետազոտողի ուշադրության կենտրոնում, իսկ դրանցից շատերը նրա մենագրություններում արժանացել են հատուկ ուսումնասիրության՝ կազմելով այդ աշխատությունների առաջնն ու էությունը։

Ա. Մնացականյանը սովետական պատմագիտությունը ներկայացրել է միութենական ու միջազգային կոնգրեսներում և կոնֆերանսներում՝ հանդես գալով ուշագրավ զեկուցումներով ու հաղորդումներով։ Պրոֆ. Ա. Մնացականյանը նշանակալից վաստակ ունի նաև պատմագիտական կադրերի պատրաստման գործում։ Նրա գիտական ղեկավարության ներքո շատ ու շատ ասպիրանտներ և դիսերտանտներ հաջողությամբ պաշտպանել են դիսերտացիաներ, դարձել գիտության մշակներ։ 1945 թվականից սկսած՝ նա դասախոսություններ է կարդացել Թիֆլիսի Պուշկինի անվան և Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտներում, ՀԿԿ կենտկոմի կուսակցական դպրոցում, Երևանի պետական համալսարանում։

Բազմազան է պրոֆ. Ա. Մնացականյանի հասարակական գործունեությունը։ Երկար տարիներ նա եղել է ՀՍՍՀ «Գիտելիք» ընկերության վարչության նախագահության անդամ և հանրապետական վարչության նախագահի տեղակալ։ Գիտելիքների տարածման և աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործին մատուցած ակնառու ծառայությունների համար Ա. Մնացականյանը պարգևատրվել է «Գիտելիք» ընկերության բարձրագույն պարգևով՝ ակադ. Վավիլովի անվան մեդալով։ Ա. Մնացականյանը պատերազմի վետերանների սովետական կոմիտեի Երևանի սեկցիայի նախագահի տեղակալն է և այդ կոմիտեի որոշմամբ արժանացել է «Ռազմահայրենասիրական աշխատանքի գերազանցիկի» կոչման։

Բազմավաստակ գիտնականն այսօր էլ մեծ եռանդով աշխատում է պատմության մի շարք հարցերի ուսումնասիրության ուղղությամբ։ Ցանկանք պրոֆ. Ա. Մնացականյանին քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ։

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտորներ